ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«07» 01 2025 թ. N 24/12-15

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Ս.ՀՈՍՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3

Մասնակից՝ **«Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 00932607, գործունեության հասցե՝ ք.Երևան Հր.Աճառյան փ.36շ.27բն, հեռ. 099 400 122/

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար ՄՍԾ Հրազդանի, Տաշիրի, Ծաղկահովիտի տարածքային կենտրոնների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 27.08.2024թ. հայտարարվել է ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «Ս.ՀՈՍՈ» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի 06.09.2024թ.-ին կայացած նիստում «Ս.ՀՈՍՈ» ՍՊ ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվալ մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված ժամկետում «Ս.ՀՈՍՈ» ՍՊ ընկերությունը գնահատող հանձնաժողովին է ներկայացրել շտկված փաստաթղթերը և հայտերի գնահատման արդյունքներով «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել՝ 3-րդ չափաբաժնի համար:

Միասնական սոցիալական ծառայության և «Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերության միջև 02.10.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3-3 գնման պայմանագրի (այսուհետ՝

Պայմանագիր) շրջանակներում «Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերության կողմից պետք է իրականացվեր 1852000 (մեկ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար) պայմանագրային գնով Ծառայության Ծաղկահովիտի տարածքային կենտրոնի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

«Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերության կողմից Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 16-րդ կետերով նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի, 2-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով նախատեսված աշխատանքները չեն կատարվել՝ ընդհանուր՝ 1194209 (մեկ միլիոն հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր ինը) դրամ արժողությամբ:

2024 թվականի դեկտեմբերի 2-ին Կապալառուն ներկայացրել է կատարողական ակտ՝ ընդհանուր 657791 (վեց հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր իննսունմեկ) դրամի չափով:

Ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերության միջև 02.10.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3-3 գնման պայմանագիրը:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով, որ «Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով և սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ս. ՀՈՍՈ» ՍՊ ընկերությանը ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**